ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԹՈՒԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թաթուլ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Թաթուլ, (0249) 2-27-09, tatul.aragatsotn@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 17

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԹՈՒԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 73 դրական եզրակացությունը, համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1, ՀՀ Արագածոտնի մարզի Թաթուլ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ քաղաքացու սեփականություն հանդիսացող 0,1455 հա /կադաստրային ծածկագիր՝ 02-019-0037-0002-ից/բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը փոխել և դարձնել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության պահեստարանների հողեր գործառնական նշանակության՝ կադաստրային քարտեզում ուղղում կատարելու նպատակով:

2, Համայնքի ղեկավարին՝իրականացնել սույն որոշման 1-ին կետից բխող համապատասխան գործողություններ:

3, Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԿՐՊԵՅԱՆ ՄԻՆԱՍ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱԼԲԵՐՏ ՀԱՐՈՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԹՈՒԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թաթուլ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Թաթուլ, (0249) 2-27-09, tatul.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 18

### 2018 Թ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով Թաթուլ համայնքի ավագանին

**որոշեց**

Հաստատել Թաթուլ համայնքի 2019թ-ի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարողականի հաշվետվությունը

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԲԵՐՏ ՀԱՐՈՅԱՆ**